# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բագարան համայնքի ղեկավարի 2013-թի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից պարտադիր լիազորությունների իրականացման շարքում տեղ են գրաղեցրել քաղաքացիների կողմից բարձրացրած դիմումների և բողոքների ընթացք տալը, ինչպես նաև համայնքի ղեկավարի մոտ անհատական ընդունելություն կազմակերպելը:

Ֆինանսների բնագավառում մշակվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, որի անբաժան մասն են կազմել նաև տեղական տուրքերի և վճարների, համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դրույքաչափերի հաստատումը:

Համայնքի բյուջեն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | Վարչական բյուջե (հազ.դրամ) | Ֆոնդային բյուջե (հազ.դրամ) |
|---|---|---|
| Հողի հարկ | 3700.0 | |
| Գույքահարկ | 652.1 | |
| Հողի վարձավճար | 400.0 | |
| Տեղական տուրք | 100.0 | |
| Դոտացիա | 6163.7 | |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | | 4678.5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 11015.8 | 4678.5 |

## ԾԱԽՍԵՐ

| Վարչական բյուջե | (հազ.դրամ) |
|---|---|
| Աշխատավարձ | 7000.0 |
| Էլեկտրոէներգիայի վարձ | 100.0 |
| Տեղեկատվական ծառայություն | 100.0 |
| Ներքին գործուղումներ | 200.0 |
| Գրասենյակային նյութեր | 250.0 |
| Տրանսպորտային նյութեր | 800.0 |
| Աղբահանում | 400.0 |
| Համակարգչային ծառայություն | 50.0 |
| Սոց. հատուկ արտոնություն | 800.0 |
| Պահուստային ֆոնդ | 1315.8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 11015.8 |

| Ֆոնդային բյուջե | |
|---|---|
| Կապիտալ շինարարություն | 4083.4 |

| | |
|---|---|
| Մեքենայի կապիտալ վերանորոգում | 595.1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 4678.5 |

2013թ-ի 1-ին կիսամյակում բյուջեի կատարողականը հետևյալն է՝

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Վարչական բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (%) |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 1600.0 | 1018.6 | 59.9 |
| Գույքահարկ | 351.2 | 242.6 | 69.3 |
| Հողի վարձավճար | 200.0 | 199.6 | 99.8 |
| Տեղական տուրք | 50.0 | 0 | 0 |
| Դոտացիա | 3081.9 | 3081.9 | 100.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 5283.1 | 4542.7 | 84.4 |

## ԾԱԽՍԵՐ

Վարչական բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (%) |
|---|---|---|---|
| Աշխատավարձ | 3500.0 | 2824.9 | 80.7 |
| Էլեկտրոէներգիայի վարձ | 70.0 | 30.0 | 42.9 |
| Ներքին գործուղումներ | 100.0 | 80.0 | 80.0 |
| Գրասենյակային նյութեր | 125.0 | 125.0 | 100.0 |
| Տրանսպորտային նյութեր | 400.0 | 340.0 | 85.0 |
| Աղբահանում | 200.0 | | |
| Սոց. հատուկ արտոնություն | 400.0 | 200.0 | 50.0 |
| Պահուստային ֆոնդ | 438.1 | 0 | 0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառ. | 50.0 | 50.0 | 100.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 5283.1 | 3649.9 | |

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ֆոնդային բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (% ) |
|---|---|---|---|
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 4678.5 | 4678.5 | 100.0 |

## ԾԱԽՍԵՐ

Ֆոնդային բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (% ) |
|---|---|---|---|
| Կապիտալ շինարարություն | 4083.4 | 1000.0 | 24.5 |
| Մեքենայի կապիտալ վերանորոգում | 595.1 | 595.1 | 100.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 4678.5 | 1595.1 | 34.1 |

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ համայնքի ղեկավարը պատասխանատու է բյուջեի կատարման համար,ուստի կիսամյակի կտրվածքով հաղորդումներ է ներկայացվել ավագանուն բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Աջակցություն է ցուցաբերվել զինծառայողների,պատերազմի վետերանների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը:Այս բնագավառում աջակցություն է ցուցաբերվել զինկոմիսարիատի և մարզային զորակոչային հանձնաժողովին ժամկետային զինծառայողների զորակոչի կազմակերպման և անցկացման հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի տարածքում ամիսը 2 անգամ իրականացվել է աղբահանություն:

Ճանապարհաշինության բնագավառում իրականացվել են համայնքի սեփականություն հանդիսացող ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

Որպես կանոն համայնքային ենթակայություն ունեցող բուժական ամբուլատորիան իրականացրել է բոլոր նախատեսված պատվաստումները և անհրաժեշտության դեպքում բոլոր հիվանդների առաջին բուժ օգնությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում կարևոր նշանակություն է ունեցել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական օգնություն տրամադրելու հարցը:

Համայնքի ավագանու որոշմամբ համայնքի թվով 10 ընտանիքի հատկացվել է 200.0հազ.դրամ դրամական օգնություն:

Որպես պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարը կազմակերպել է համայնքի տարածքում գտնվող անասնաբուժական ծառայության գործունեությունը [illegible] հիվանդությունների կանխարգելման և ազգաբնակ[illegible] պահպանման հետ կապված:

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան հ/գ Գ. Մարգարյան